Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. հուլիսի 3-ին կայացած թիվ 17 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. հուլիսի 3-ին կայացած թիվ 17 նիստը անցկացվեց հարցման կարգով:

Օրակարգում ներկայացված էր մեկ հարց՝

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը: Ստորև ներկայացվում է ասպիրանտների անվանացուցակը՝ համապատասխան մասնագիտությունների, ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների վերաբերյալ տվյալներով:

1. Աստղիկ Կարենի Համբարձումյան
   Գիտական ղեկավար՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյան
   Ատենախոսության թեմա՝ *«Ֆոտոտրոֆ մանրէների առանձին և խառը կուլտուրաներում կենսաջրածնի արտադրության ուսումնասիրությունը աճեցման տարբեր պայմաններում»*, Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ:
2. Լուսինե Գևորգի Բաղդասարյան
   Գիտական ղեկավար՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Տիգրան Աշոտի Հարությունյան
   Ատենախոսության թեմա՝ *«Գենաթունային էֆեկտների փոփոխությունը միտոքոնդրիումների միջբջջային փոխանցմամբ in vitro»*, Գ.00.15 «Գենետիկա» մասնագիտությամբ:
3. Էլեն Էդուարդի Խաչատրյան
   Գիտական ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, կ.գ.դ. Սիրանուշ Գերասիմի Նանագյուլյան
   Ատենախոսության թեմա՝ *«Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջանների մակրոմիցետների տեսակային բազմազանության և էկոլոգատրոֆիկական առանձնահատկությունների ուսումնա-սիրությունները»*, Գ.00.05 «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ:
4. Շողիկ Հակոբի Ղազարյան

Գիտական ղեկավար՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ, «Կենսաբանություն» ԳՀԻ Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար Կ.Ա. Ղազարյան:

Ատենախոսության թեմա՝ *«Արարատյան դաշտի հողերի միկրոբիոմի և ֆերմենտային ակտիվության մետագենոմային բնութագրումը, դրանց ֆունկցիոնալ հարմարվողականությունը աղակալմանը և հողը բարելավող հավելումներին»,* Գ.00.05 «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ:

5. **Մելինե Ներսեսի Ղարիբյան**

   Գիտական ղեկավար՝ կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Մարինե Աշոտի Փարսադանյան

   Ատենախոսության թեմա՝ *«Որոշ նեյրոմեդիատորների փոխազդեցության ուսումնասիրությունը ծայրամասային արյան ալբումինի հետ»,* Գ.00.02 «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ:

6. **Մանե Մարտունիկի Թադևոսյան**

   Գիտական ղեկավար՝ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյան

   Ատենախոսության թեմա՝ *«Թերմոֆիլ կերատինազ արտադրող մանրէների կենսատեխնոլոգիական ներուժի ուսումնասիրությունը կերատինային թափոնների վերամշակմամբ արժեքավոր կենսաակտիվ միացությունների ստացման համար»,* Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. Կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ:

7. **Սուսաննա Գագիկի Ջումայան**

   Գիտական ղեկավար՝ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյան

   Ատենախոսության թեմա՝ *«Հայաստանում տարածված անոթավոր սպորավոր որոշ դեղաբույսերի էնդոֆիտային միկրոբիոտայի բազմազանության և բույսերի կենսաբանական առանձնահատկությունների ձևավորման մեջ դրա դերի ուսումնասիրությունը»,* Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. Կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնների կողմից ներկայացված կարծիքները հաստատել վերոնշյալ ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարներին՝ ըստ համապատասխան մասնագիտությունների:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան